ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 27-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 24.07.2018Թ. ԹԻՎ 5-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 20-րդ կետի 8-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ոստիկանության պետի 24.07.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում արձակուրդների ձևակերպման և տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 5-Լ հրամանը լրացնել 11.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1 Ամենամյա արձակուրդի տրամադրումը, այն թույլատրելու իրավասություն ունեցող ղեկավարի կողմից, հաշվի առնելով ծառայողական անհրաժեշտությունը, կարող է հետաձգվել, եթե ոստիկանության ծառայողը մեղադրվում է կարգապահական խախտում կատարելու մեջ և նրա նկատմամբ կատարվում է ծառայողական քննություն:

Ծառայողական քննությունը ավարտվելու կամ դրա ընթացքը կասեցվելու դեպքում՝ նշված սահմանափակումը վերանում է:»

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնակազմին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Ա.ՍԱՐԳՍՅԱՆ**

«06» 12 2019թ.
ք.Երևան